

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

287. ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ՄՈՒՑԵԱԼ ՊԱՏ. ՃԱՌԵՆ ԵՆ ՀԱՒԱՏՔԻՆ ՈՒ ԳՈՐԾԸ. — Խօսքին կարգը կը բերէ զմեզ նկատի առնելու արդարացման պայմանները: Ըստ Բողոքականաց. միակ պայմանն է հաւատքը՝ ինչպէս յիշեցինք: Անոնք հաւատքը կը բաժնեն Կրեք տեսակներու, համեմատ հաւատքին առարկաներուն: որոնք են պատմութիւններ, Բնութիւններ, խոստումներ, Իսկ արդարացուցիչ հաւատք ըսելով կը հասկնան Քրիստոսի խոստումներուն վրայ: դրանով զատակութիւնը, .և անկէ միայն կրնան շնորհ արդարացումը, առանց հաւատացելիս կոզմէ՝ ջոյց տրուած սարիչ որեւէ պայմանի: Սակայն Ս. Գրքը լոկ հաւատքով չի բաւականանար, երբ արդարացման շրջան մասին կը խօսի: Եւ անորէն եթէ դարձիչ յամենայն անօրէն նստիւնք իւրայ զոր արտը, և պահանջը զամենայն պատուիրանս իմ և արասցէ արդարութիւն և ողորմութիւն, կելով կեցցէ և մի մեռանիցի (Նզեկ. ԺԸ. 21): Եւ որպէսզի չկարծուի թէ նոր (Բաւ. 24) կը ձայնակցի նաև Պողոս. Զի ոչ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ, այլ տանելիք օրինացն արդարացիան (Հռոմ. Բ. 13): Զի՝ Եթէ ունիցիմ զամենայն հաւատս մինչև զլերինս փոփոխելոյ, և զսէր ոչ ունիցիմ՝ ոչինչ օգտիմ (Ա. Կորնթ. ԺԳ. 2): Այս պատճառաւ Եի Քրիստոս ոչ թլփատութիւն ինչ է և ոչ անթլփատութիւն, այլ հաւատք սիրով յաճողեալք (Գաղ. Ե. 6): Այս բոլոր վկայութիւններէն կը տեսնուի թէ ըսցի հաւատքն կը փնտռուին նաև բարի գործեր և ոչ, որոնք գործնական առաքինութիւններ են, զի բոլոր բարի գործերը սովոր ենք սիրոյ մէջ հասկնալ,

ըստ այնմ թէ շէրուն օրինաց սէր է (Հռոմ. ԺԳ. 10):

288. ՀԱՒԱՏՔԸ ՍՈՍԿ ՎԱՍԱԶՈՒԹԻՒՆ ԶԷ ՔՐԻՍՏՈՍԻ ԽՈՍՏԱՆՄԱՆԵՐՈՒՆ. — Հարկ է գիտնալ նաև թէ ամէն բանի մէջ փրկուած թեան հիմ ներկայացուած հաւատքը լոկ խոստումներու վրայ վստահութիւն կամ մեղաց թողութեան ապահովութիւն չէ, այլ Քրիստոսէ յայտնուած ճշմարտութեան մասին մոտաւոր իսկական հաւատութիւն: Այդ է զոր կը նստաւորէ և Յովհաննէս, ըսելով. ԵԱՅ՝ աշխարհինչ գրեցաւ, զի հաւատացէք եթէ Յիսուս Բրիստոս Ե. Արքի Աստուծոյ, և զի հաւատացէք. և զկանսն յաւանականաց ընդունիցիք յանուն նորոյ (Յովհ. Ի. 31), ու հաւատքը, զոր. Փիլիպպոս պահանջից ներքինիէն, այս նշար օր պահանջու և ըսաւ. ԵՀաւատամ եթէ և Յիսուս Բրիստոս Որքի Աստուծոյ (Գործք. Ը. 37): Արք՝ Քրիստոսի աստուածորդութեան կամ աստուածութեան կամ յարութեան դաւանութիւնը. Քրիստոսի սակ. խոստումներուն վստահութիւնն աւելի բան մըն է:

289. ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ՄԻՆՔ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Սրբարար շնորհը համեմատեցինք արդարութեան հետ, կամ, ինչ օր նոյնն է, արդարացման շնորհը՝ արդարացումին հետ, իբրև պատճառ գործին հետ, ու խօսելով արդարութեան մասին՝ ջոյց տալինք անոր պայմանները, ջուշենք հիմակ ու անոնք յատկութիւնները: Ասոնք երեք կը համարուին, անստուգութիւն, անհաւատարմութիւն, անհաստատութիւն: Ու այս երեք յատկութիւններուն համեմատ կը կազմուին առ երեք վարդապետական սեպտեմբերներ կամ գլուխները. ոչ ոք կրնայ աներկբայ ստուգութեամբ հաւատարի լինել իր արդարութեան մասին. ոչ ոք պէտք է կարծէ թէ իր ստուգած արդարութիւնը հաւասար է ամենուն մէջ և պիտի մնայ հաւատար, այլ թէ կարող է անեցնել զայն հեռակեանք, և վերջապէս թէ ոչ զորոյ ապահով ըլլալ թէ անկարուստ պիտի մնայ իր պապած արդարութիւնը, այլ ընդ-

հակառակն պետք է վախճայ որ մի գուցե մեղօք կորսնցնէ գանդիս: Այս երեք գլուխներուն գլխավին կը հակառակին արեւմտեան նորադպրոցները, տնոնց ներհակ երեք գլուխները գրելով. բայց Ս. Գրոց բացայայտպէս վարդապետութիւնը չի նպատակը անոնց վարդապետութիւնը:

293. Ս. ԳԻՐԲԷՆ. ՎԵՂԱՅԻԹԻԻՆ ԿԵՐ
ՈՒՅԻ ՄԵԼԻՆ. — Առաջին վկայութիւնը ունինք Պօղոսէ, որ խօսելով իր տնին մասին կ'ըսէր. «Նաեւ գտնան իմ ոչ քննեմ, զի ոչ ինչ օրհանմ գտնան իմոյ, այլ նշ եթէ այսու տիրութեամբ. զի որ քննէ՞ն ինձ» Տէր էջ (Ա. Կորնթ. Գ. 4): Նոյնը հաստատում է կանխաւ Առաքելը ալ «Ո՞ր պարծնացի սիրեա առար ունեյ. կամ ո՞վ համարձակեցի եթէ սուրբ իցէ ի մեղաց (Աւսին. Ի. 3): Իսկ երկրորդին համար ունինք Պօղոսի խօսքը, որ կ'ըսէր իմ Եւսեբան զՊարզեացէ և քաղաքացէ գնեթմոնիս ձեռք, և անհետոցէ զարդիւնս արդարութեան ձեռք, յամենայնի մեծացեալս մօմնայն անասութեամբ (Բ. Կորնթ. Ժ 1-4): Նոյնը կը քաղենք նաեւ այն խօսքերէն, որոնց մէջ կ'ըսէր խօստեի մեծագոյնս սիրոյն և կատարեալ սիրոյ մասին, որ աստուծոյ իսկ ընդմեծմ կ'ըլլայ փոքրագոյնին և անկատարին ալ գոյութիւնը, հեանարար և նուազումն աւստանութիւնը: Քրիստոս կ'ըսէր. «Եթե և քան զայս սէր ոչ ոք ունի, ձեռք գտնան իւր զիցէ ի վերայ բարեկամաց իւրոց (Յովն. ԺԵ. 13): Ու Յովնանն կը գրէր. «Երկիւղ ոչ կոյ ի սէր, այլ սէրն կատարեալ ի բոլի մեծից գերկիւղն» (Ա. Յովն. Գ. 18): Երրորդին համար բաւական ըլլայ յիշել Քրիստոսի խօսքերը իր աշակերտներուն «Արթուն կայէ՞ք և աշխատարարէք. զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն» (Մատթ. ԻԶ. 41), աւ Պօղոսի խրատները. «Հաւատալ հաստատեցոր, մի՛ հպարտանար, այլ երկիւր» (Հռոմ. ԺԴ. 20), «Որ համարիցի հաստատուն քալ գրոյն լիցի, գուցէ անկանիցի» (Ա. Կորնթ. Ժ. 12): Այսպէս զեռ յաճախ ուրիշ Թուգիկիւրն մէջ ևս Գործնայ, Նոր կատարեալս թուր գրեքերը կը պաշտպանեն ա-

շակերտանիւնը մեղքէ և կորուստէ, հետեւորդ և կ'անթողան հաստատութիւնս ստացած արդարութիւնը կորսնցնելու:

294. — Շնորհաց վերաբերմամբ վերջին խնդիրն է արդեանց կամ արժանեաց կամ վաստակաց (mérite) գոյութիւնը, յառաջ եկած արեւմտեան նորադպրոցներուն հար վարդապետութիւններէն, որոնք աւագիցին զրկել մարդիկ աւ նոյնիսկ հաւատարեալները, անձնական արժանեաց հաստատութիւնէն, ըսելով թէ ամէն արժանիք անհատական է միայն Քրիստոսի, և անոր վաստակն է որ կը տարածուի ամէն մարդուն վրայ, և թէ մարդային գործերը, ինչ զիմանի կամ աստիճանի կամ եղանակի մէջ ալ ըլլան. չեն կրնար արդիւնք կազմել կամ արժանիքի հիմ ըլլալ կամ վաստակոց փաստ՝ Աստուծոյ առջեւ: Այնպէս որ ինչ որ մարդ կը գործէ՝ կը գործէ ի դուր, և անոնցմէ ոչ մէկ եղաւ չկայ իրեն, ինչպէս նախնիաց խնդիրներուն նոյնպէս և նոյն խնդիրն «մէջ» ուղղադաւան վարդապետութեան տարապայման ներութիւնները և Քրիստոսի արժանեաց կերպարանութեան բացատրութիւնները և այլ արժանիքներ իրան զարդեներուն իրականութիւնը ոչնչպէս մը ազդած են անոնց վրայ որ, ինչ որ լուծած են թէ անզոյնապէս կ'ըսէր հաստատուն աստարտար, իրենք հակառակորէն տարածած են իսկաւորեալ մեթոդը, բացի Քրիստոսի արժանեաց գերազանցութիւնէն, այնպէս որ այս վերջինին բացարձակ ստուգութիւնը կամ հիմնականութիւնը խորհիլ տուած է իրենց՝ մարդուն մէջ ըլլալիք բարի գործերուն արդիւնքին կամ որժանեացին անհիմնականութեան վրայ կամ, ուրիշ բացատրութեամբ, մէկին ազդածը յառաջ ընթացած է իրենց մտածողութիւն մէջ միւսին ջնջումը:

295. ԻՍԿԱՅԻԹԻՆ ԱՄԵՆԵԱՆՑ ԿԵՐ ՎԵՂԱՅԻՆ. — Արդիւնք կամ վաստակ ըսելով սովորաբար կը հասկնանք Աստուծոյ ծառայելու համար կատարուած այն բարի գործը, որ կրնայ չարմիլ զԱստուծոյ գերբնական պարգևներ հասնեցնելու: Այդ հաստատումը կը կոչուի վարձք կամ

պարզեւ, և անոր տըւելութիւնը կը կոչուի վարձատրութիւն կամ պարզեւներու հասուցում: Արդիւնքը կը տարբերի գինէն, որ ուրիշ բանի մը հաւասարակշիւ բան մըն է: Կը տարբերի նաեւ խնդրանքէն՝ որ հայցուածին զօրութիւնը եղած ընդունումն է, և վճարումէն կամ շնասուց հասուցումէն՝ որ գործուած անիրաւութեան կամ զօրութեան անդ ընծայուած փոխարինութիւնն է: Արդիւնքը կամ վաստակը գլխաւորաբար երկու տեսակ է, էական և հաղորդական, առաջինը ինքն իր մէջ ունի իր արժանիքը: այսպէս են Քրիստոսի վաստակները կամ արդիւնքները: Իսկ այս վերջինը իր ուժը կ'ընդունի ուրիշին հետ ունեցած իր հաղորդութիւնէն, որ այս պարագային՝ Քրիստոսի վաստակին հետ եղած հաղորդութեան է: Վաստակը ուրիշ տեսակներ ալ ունի, ըստ արժանեաց և ըստ պատշաճի: Աստուծոյ առաջինը կ'իրականանայ արդիւնքին և հասուցումին համեմատութեան մէջ, այնպէս որ, այդ պարագային, հասուցումը արդարութեան համեմատ կը պահանջուի: Իսկ երկրորդը կրնայ տուողը պարզեւելու դրոշմ, բայց չի կրնար ծնիլ արդարութեան շնորհ: ուստի որ տըւելութիւնը առաջինէն այնչափ կը տարբերի որչափ պատշաճը հարկէն: Այս երկուքը կը յայտնուին շարժում յառաջ բերող զօրութեան զանազանութեանէն և հասուցում յառաջ բերող հաւասարութեան զանազանութիւնէն: Վասնզի թէն, ճշգրիտ խօսելով, շարժելու զօրութիւնը յառաջ կու գայ հասուցմանց հաւասարութիւնէն, և սակայն գործողին և իր պարագաներուն թանձրացեալ վիճակին մէջ անորոշէ կամ սակաւարժէ գործը, շատ անգամ՝ խոհական է կամ իմաստուն իշխանի կամար արժանաւոր՝ կամ աւելի ճիշդ, պատշաճաւոր, կ'երեւի գործին յարգէն գերիվեր եղած հասուցումի մը: Այս է ըստ պատշաճի արդիւնքը: Իսկ ըստ արժանեաց արդիւնքին մէջ՝ պէտք է արդիւնքը հասուցմանց հետ այնպէս կշռել ինչպէս սովոր ենք չափել իրերու գինը վաճառումի գալինքին մէջ, այլ ինչպէս կը համեմատենք բերքին արդիւնքը ցանուած սերմին հետ:

Այսչափը բաւական ըլլայ արդեանց կամ վաստակոց իսկութեան բացատրութեան համար:

293. ՎԿԱՅՈՒԹԻՒՆԻՆԻՄ՝ ՄԱՐԴՈՑ ՄԷՋ ԱՐԴԵԱՆՆԵՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՆ. — Իսկ մարդոց մէջ արդեանց գոյութեան մասին կը վկայէ Պողոս յայտնապէս: «Իւրաքանչիւր ոք զիւր վարձ առնուցու ըստ իւրում վաստակոց» (Ա. Կորն. Գ. 8), ու դարձեալ՝ «Ո՛րք գիտէք, եթէ որ յատկարկին ընթանան, ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք առնու գոյութեանցէն» (Ա. Կորն. Թ. 24), ու ինքզինքին համար խօսելով կ'ըսէ. «Ջարառք պատերազմի պատերազմեայ, զընթացն կատարեցի, զհաւատան պահեցի. այսուհետեւ կայ մեայ ինծ արդարութեան պատիկ, զոր հասուցէ ինծ Տէր յաւուր յայնմիկ արդարն զատուոր» (Բ. Տիմ. Դ. 7-8), Աւելորդ կը համարինք վկայութիւններ բարդել, վասն զի ամբողջ Ս. Գրքին մէջ երկնից արքայութեան իբրեւ օրինակ յառաջ կը բերուի պօսկը, որ պատերազմէն և յաղթութեան վերջ իբրեւ վարձք կը տրուի քաջութեան արդեանց և առաքինական վաստակոց համար:

294. ԿԱՐՄԻՔՆԻՐ Ե՛Ւ ՎԱՍՏԱԿԻ Ե՛Ւ ԱՐԴԻՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՐ. — Բարձրագոյն խնդիրներ կը յուզուին Դպրոցականութենէ մէջ՝ վաստակի և արդիւնքի հանդիմանականութեան մասին, և որովհետեւ մենք չենք ուզեր սուղուիլ այդպիսի հարցերու մէջ, բաւական կը նկատենք ամփոփել այստեղ անոնցմէ ամենէն կարեւորները: 1) Թէն շատերը կ'ընդունին թէ մարդկային գործերը իրենց սեփական վաստակները ունին և հետեւաբար ըստ արժանեաց վարձքեր, բայց կան նաեւ որ լոկ ըստ պատշաճից կը կարծեն արդարներուն խոստացուած վարձքերը: 2) Ըստ արժանեաց վարձքը պաշտպանողները կը զանազանեն զայն ըստ գնոյ հասուցումէն, ու այսպէս կը մեկնեն Պողոսի խօսքը: «Ինծ այնպէս թուի եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդիմանող փառանք» որ յայտնելոց են ի մեզ» (Հռոմ.

ՓԱՌՔ ԱՆՄԱՀՆԵՐԻՆ

Փառք անմահներին, նրանց վեհ գործին,
 Փառք նրանց սիրոյն, անվեհեր կամքին,
 Նրանք զոհուեցին, անմահ մնացին,
 Հայ ժողովուրդին պատիւ բերեցին:

Փառք նրանց կրած տառապանքին,
 Փառք նրանց ձեռք բերած անմահ արդիւնքին,
 Դարեր շարունակ նրանք կը յիշուեն.
 Արժանի կ'լինեն երկնային փառքին:

Փառք Հայ ժողովրդի կրած տառապանքին,
 Փառք նրա թափուած կարմիր արիւնին,
 Փառք նրանց հոգւոյն, ամբասիր գործին,
 Որ պատիւ բերին Հայ ժողովուրդին:

Խունկ ու պատարագ նրանց շիրմին,
 Կատարեալ հանգիստ նրանց անլինին,
 Թող Տէրը նրանց լոյսով պսակէ,
 Հանգրեանեալ կեանքին արժանի անէ:

ՌՈՒԲԷՆ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Հ. 18): 3) Նմանապէս, ըստ արժանեաց
 հատուցմանց դրութեան մէջ, պիտի բռն-
 նելով Քրիստոսի խոստումներուն վրայ
 հաստատուած գլխաւոր հիմք, սովորական
 է կարծել թէ հարկ է չգրկել բանական և
 ազատ գործողին գործերը որքէ ըստ ներ-

քին արդեանց արժանաւորութենէ: 4)
 Այսուհանդերձ, ըստ Պողոսի խօսքերուն՝
 զորս յիշեցինք, միշտ տեղ կը մնայ ըսե-
 լու թէ ի՞նչ որ ալ լինի գործին արժե-
 քը, հաստատուած վարձքը միշտ ալ ար-
 ժանիքէն վեր կ'ըլլայ:

(Շարունակելի՝ 29)

ՄԱՀԱԲԻԱ ԱՐԲԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ